

idcoin տրամադրման և օգտագործման կանոններ

1. Հասկացություններ.

1. Բանկ- «ԱյԴի Բանկ» ՓԲԸ
2. ID Group-ի անդամ ընկերություններ – «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, «Իդրամ» ՍՊԸ, Idplus լոյալության հարթակը սպասարկող ընկերությունը («Քլաբ Սիքսթին ԷյԷմ» ՓԲԸ):
3. idcoin – Idplus լոյալության հարթակի միջոցով տրամադրվող Բանկի լոյալության միավոր, որն իրենից ներկայացնում է որոշակի ժամկետով նվիրատվության խոստում/օֆերտա Նվիրառուներին առ այն, որ Նվիրառուի կողմից Գործընկեր կազմակերպություններում Idram QR կոդի գործածության եղանակով վճարում կատարելու ժամանակ Բանկի նվիրատվության օֆերտան ընդունելու/ակցեպտավորելու դեպքում Բանկը պարտավորվում է նվիրատվության խոստումի չափով Նվիրառուի փոխարեն կատարել վճարային պարտավորությունը՝ Գործընկերոջը այդ գումարը փոխանցելու միջոցով: Ընդ որում՝ յուրաքանչյուր idcoin-ը 1 հայկական դրամի չափով վճարում կատարելու խոստում է (օրինակ՝ 4 800 Idcoin-ը հավասար է 4 800 ՀՀ դրամ վճարելու խոստման):
4. Նվիրառու - ֆիզիկական անձ, ում տրամադրվել է idcoin:
5. Idplus լոյալության հարթակ – բջջային հավելված, որտեղ հասանելի են լոյալության հարթակի բոլոր ծառայությունները՝ այդ թվում idcoin-ը:
6. Գործընկեր – «Իդրամ» ՍՊԸ հետ համագործակցող ընկերություն, որտեղ առկա է Idram QR վճարման հնարավորություն:
7. Կանոններ – idcoin-ի տրամադրման և օգտագործման սույն կանոնները:

2. Ընդհանուր նկարագրություն.

8. idcoin կարող է տրամադրվել Բանկի կողմից կազմակերպվող արշավների և համագործակցության պայմանագրերի շրջանակներում, հավատարմության ծրագրերի, հատուկ պայմանների կատարման արդյունքում, որպես նվիրատվություն, ինչպես նաև առանց որևէ նախապայմանի՝ ըստ Բանկի հայեցողության: idcoin ստանալու վերաբերյալ արշավների և/կամ հատուկ պայմանների առկայության դեպքում վերջիններս ենթակա են հրապարակման Բանկի պաշտոնական կայքէջում:
9. idcoin-ը ձևավորվում է Idplus լոյալության հարթակում: Յուրաքանչյուր նոր տրամադրված idcoin-ը գումարվում է նախորդին՝ Նվիրառուի մոտ ցուցադրելով idcoin-

ի հանրագումարը: Idplus հավելվածում պահպանվում է idcoin-ի ստացման և օգտագործման ողջ պատմությունը:

10. idcoin հնարավոր չէ ձեռք բերել կամ գնել, բացառությամբ Կանոններով նախատեսված Բանկի կողմից տրամադրման դեպքերի:
11. Նվիրառու IDcoin-ի օգտագործման համար պետք է դառնա Idplus կամ Idram&IDBank հավելվածների օգտատեր:
12. idcoin-ի օգտագործման միջոցով հնարավոր է իրականացնել հետևյալ 2 տեսակի գործարքները՝
 - Գործընկերոջ մոտ վճարման կատարում Idram&IDBank հավելվածի կամ Idplus լոյալության հարթակի միջոցով, եթե idcoin-ի մնացորդն ամբողջությամբ բավարարում է վճարում կատարելու համար,
 - Գործընկերոջ մոտ համակցված (կոմբո) վճարման կատարում Idram&IDBank հավելվածի կամ Idplus լոյալության հարթակի միջոցով, եթե idcoin-ի մնացորդը չի բավարարում վճարում կատարելու համար, որի դեպքում Նվիրառուն կարող է չբավարարող մասը վճարել ինչպես Idram&IDBank հավելվածի, այնպես էլ Idplus լոյալության հարթակում առկա բոնուսների, նվեր քարտերի միջոցով:
13. idcoin-ի օգտագործումը ենթադրում է Բանկի կողմից ՀՀ դրամով համարժեք գումարի փոխանցում Գործընկերոջը, որի արդյունքում Նվիրառուի idcoin-ի մնացորդը համապատասխանաբար նվազեցվում է:
14. Նվիրառուն կարող է մերժել idcoin-ի ստացումը՝ այդ մասին տեղեկացնելով Idplus լոյալության հարթակի կոնտակտային կենտրոնին կամ Բանկին:
15. idcoin-ի տրամադրման համար օգտագործվում է բջջային հեռախոսահամարը, ընդ որում՝ մեկից ավելի գրանցված և գործող բջջային հեռախոսահամար ունենալու դեպքում առաջնահերթությունը տրվելու է Idram&IDBank հավելվածում գրանցված հեռախոսահամարին, իսկ դրա բացակայության դեպքում՝ Բանկում գրանցված վերջին հեռախոսահամարին: Բջջային հեռախոսահամարը իրավաբանական անձի անունով հաշվառված լինելու դեպքում Բանկը idcoin տրամադրում է տվյալ հեռախոսահամարը օգտագործող ֆիզիկական անձին՝ ելնելով այն կանխավարկածից, որ անձը հանդիսանում է այդ հեռախոսահամարի օրինական օգտագործող:
16. Նվիրառուն պարտավոր է հեռախոսահամարի փոփոխության դեպքում անհապաղ տեղեկացնել Բանկին, ընդ որում՝ սույն պարտավորությունը չկատարելու դեպքում կամ Նվիրառուի հեռախոսահամարը Բանկին ոչ լիարժեք/սխալ տրամադրելու դեպքում Նվիրառուին հասանելիք idcoin-ները ենթակա չեն տրամադրման:
17. Նվիրառուի կողմից idcoin-ով կատարված ցանկացած գործարքից՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով ամբողջությամբ հրաժարվելու դեպքում Նվիրառուի idcoin-ներն ամբողջությամբ վերականգնվում են (վերադարձվում են):
18. Նվիրառուի կողմից idcoin-ներով կատարված ցանկացած գործարքից՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով մասնակի հրաժարվելու դեպքում հաշվի է առնվում վերադարձվող աղբյուրների հետևյալ առաջնահերթությունը՝
 - Idram դրամապանակ,
 - Բոնուսներ,

- Idcoin,
 - Նվեր քարտեր,
 - Այլ աղբյուրներ:
19. Նվիրառուն չի կարող պահանջել Բանկից idcoin-ին համարժեք դրամ տրամադրել իրեն, ինչպես նաև բողոքարկել տրամադրված idcoin-ի չափը:
20. Idcoin-ների տրամադրման հետ կապված հարկային պարտավորությունների վճարման մասով հարկային գործակալ է հանդիսանում Բանկը:

3. idcoin-ի օգտագործման և մնացորդի զրոյացման պայմանները.

21. idcoin-ը օգտագործելու նպատակով Նվիրառուն պետք է ապահովի հետևյալ պայմանները.
- ա. Առաջին վճարումը պետք է կատարի idcoin-ի առաջին հաշվեգրումից հետո 365 օրվա ընթացքում,
 - բ. Եթե առաջին վճարումը կատարելուց հետո Նվիրառուի idcoin-ներն ամբողջությամբ չեն օգտագործվում, ապա յուրաքանչյուր հաջորդ վճարումը Նվիրառուն պետք է կատարի idcoin-ի օգտագործմամբ վերջին վճարումից հետո 365 օրվա ընթացքում:
22. Նշված պայմանների չկատարումը հանգեցնում է idcoin-ի մնացորդի (որը ներառում է նաև այդ ընթացքում հաշվեգրված idcoin-ների հանրագումարը) ամբողջական զրոյացմանը (նվիրատվության օֆերտան դադարում է): Ընդ որում՝ ամբողջական զրոյացումից հետո հաշվեգրվող idcoin-ները օգտագործելու նպատակով Նվիրառուն կրկին պետք է ապահովի վերոնշյալ կետի պայմանները:
23. Եթե ակնթարթային idcoin (երբ idcoin-ը տրամադրվում է անմիջապես վճարման պահին) է տրամադրվում որևէ արշավի շրջանակում Idram QR-ի միջոցով ապրանքի գնման արդյունքում, ապա «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով այդ ապրանքի վերադարձը համարվում է Նվիրառուի կողմից idcoin-ից հրաժարում, ընդ որում՝
- Ապրանքի ամբողջական վերադարձի դեպքում կատարվում է տվյալ գնման դիմաց տրամադրված idcoin-ների ամբողջական զրոյացում, իսկ
 - Ապրանքի մասնակի վերադարձի դեպքում կատարվում է idcoin-ների զրոյացում՝ վերադարձվող ապրանքի արժեքին համամասնորեն:
24. Նվիրառուի կողմից idcoin-ի առաջին անգամ օգտագործումը հավաստում է, որ Նվիրառուն ծանոթացել է սույն Կանոններին, համաձայն է դրանց և ընդունում է դրանք:

4. Իրավունքներ և պարտականություններ.

25. Նվիրառուն իրավունք ունի՝

- Ընդունել idcoin-ը ամբողջությամբ կամ մաս-մաս՝ Գործընկերների մոտ վճարումներ կատարելու եղանակով,
- Մերժել idcoin-ի ստացումը,
- Հարցերի և խնդիրների դեպքում դիմել Idplus լոյալության հարթակի կոնտակտային կենտրոնին,
- Ստանալ տեղեկություններ կատարված գործարքների վերաբերյալ՝ Idplus լոյալության հարթակի idcoin-ի Պատմություն բաժնից:

26. Նվիրառուն պարտավոր է՝

- Պահպանել սույն Կանոնները:

27. Բանկն իրավունք ունի՝

- Սահմանել պայմաններ idcoin-ի հաշվարկման և տրամադրման վերաբերյալ,
- Միակողմանի փոփոխել Կանոնները և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ պաշտոնական կայքում հրապարակելուց հետո, ինչի արդյունքում Նվիրառուն համարվում է պատշաճ իրազեկված:
- Զրոյացնել idcoin-ները սույն Կանոններով սահմանված պայմանները խախտելու դեպքում,
- Դադարեցնել idcoin-ների օգտագործման իրավունքը՝ «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և հաճախորդի հետ գործարար հարաբերությունները դադարեցնելու ընթացակարգ»-ի համաձայն Նվիրառուին անցանկալի հաճախորդ դասակարգելու դեպքում, այդ թվում՝ այդ ընթացակարգում դասակարգման հիմք հանդիսացող գործողությունները ID Group-ի անդամ այլ ընկերությունների նկատմամբ կատարելու դեպքում:

28. Բանկը պարտավոր է՝

- Ապահովել idcoin-ով գործարքների անխափան կատարումը,
- Դադարեցնել idcoin-ների օգտագործման իրավունքը՝ Նվիրառուի ցանկությամբ,
- Պահպանել idcoin-ով գործարքների ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով Կանոններում նշված բացառությունները:

5. Համաձայնություններ.

29. Նվիրառուն համաձայնություն է տալիս, որ իրեն նույնականացնելու, idcoin-ի տրամադրման համար որոշումներ ընդունելու, իրավունքներ ձեռք բերելու կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելու նպատակներով (ընդ որում՝ անձի վերաբերյալ տեղեկությունները Բանկը կարող է հավաքագրել իրավաչափ ցանկացած եղանակով, ինչպես անմիջապես իրենից, այնպես էլ՝ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրներից) Բանկը կարող է մշակել, այդ թվում՝ հավաքագրել, ամրագրել, մուտքագրել, համակարգել, կազմակերպել, պահպանել, վերափոխել, վերականգնել, փոխանցել /ID Group անդամ ընկերություններին կամ քաղաքացիական այլ

պայմանագրերի հիման վրա ծառայություններ մատուցող անձանց կամ կազմակերպություններին, ՀՀ և օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններին/, ուղղել, ուղեփակել, ոչնչացնել, օգտագործել, ինչպես նաև՝ դիմել ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև՝ տվյալներ մշակող ցանկացած անձի և ստանալ Նվիրառուի վերաբերյալ հետևյալ տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը:

30. Նվիրառուն համաձայնություն է տալիս, որ ID Group-ի անդամ ընկերությունները միմյանց տեղեկություններ փոխանցեն idcoin-ի տրամադրման, ինչպես նաև դրանցով կատարված գործարքների վերաբերյալ: